

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՐԱՅԻՆԻ» ԵՎ «ՕՏԱՐԻ» ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ
ՆՇԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋՄԱԿՈՒԹԱՅԻՆ
ՂԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՂԱՄԱՏԵՔՍՈՒՄ

ՂԱԶԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մարդկության պատմության համայնապատկերն աչքի է ընկնում տարբեր երկրների ու ժողովուրդների սոցիոնշակուրային բազմազանությամբ: Դժվար է պատկերացնել որևէ մշակույթ առանց լեզվի, որով խոսում է նրան պատկանող ժողովուրդը, արտահայտվում են յուրահատուկ դիցաբանական պատկերացումները, կրոնը, բարոյականությունը, արվեստը, գիտությունն ու փիլիսոփայությունը: Լեզուն և լեզվամշակույթն ունեն այնպիսի առանձնահատկություններ, որոնց ուսումնասիրությունը որոշակիորեն լույս է սփյուռք միջմշակութային հաղորդակցման և մշակութային երկխոսության հիմնախնդիրների պարզաբանման վրա: Այդ առանձնահատկությունների մեջ մտնում են այնպիսի գործողություններ ու մեխանիզմներ, ինչպիսիք են, մասնավորապես, կարծրատիպացումը և լեզվական մարկերները, որոնց գործառությամբ լեզվական առանձին միավորները ստանում են լրացուցիչ իմաստներ ու նշանակություններ և վերածվում միջմշակութային հաղորդակցման դիսկուրսի առանձնահատուկ տարրերի: Պատահական չեն, որ կարծրատիպերը դարձել են ժամանակակից հումանիտար դիսկուրսի առանցքային հիմնախնդիրներից մեկը, քանի որ դրանց հիման վրա ձևավորվում են մշակույթի խորհրդանիշները [մարկերները]: Սակայն նինչ այս երևույթների բովանդակային պարզաբանումը հարկ է դիտարկել, թե միջմշակութային փոխհարաբերության և երկխոսության գործընթացում ինչպիսի նշանակություն ունի տարբեր մշակույթների ներկայացուցիչների կողմից աշխարհի յուրացման ու աշխարհներակալման բովանդակությունը:

Մարդու կողմից շրջակա միջավայրի մասին տեղեկույթի ընկալումն ունի ընտրովի բնույթ: Յուրաքանչյուր մարդու մշակութային և կենսական փորձը, հոսյօնը, դաստիարակությունն ու կրթությունն անհատական ու անկողնելի են, և այդ պատճառով մարդիկ միևնույն իրադարձություններին հաճախ տալիս են տարբեր մեկնաբանություններ: Բանն այն է, որ շրջակա աշխարհից ստացած տեղեկությունները մարդիկ համակարգում ու դասսակարգում են ըստ իրենց նախապատվությունների ու աշխարհներակալման: Այսինքն՝ ընկալված իրերը, մարդիկ, հարաբերություններն ու երևույթները ստորաբաժանվում են համապատասխան խմբերի, դասերի, տեսակների:

Յարկ է նշել, որ շրջակա աշխարհի ընկալման ու յուրացման ընթացքում մարդը ղեկավարվում է գեղեցկության, ծշմարտության, ընկերու-

թյան, ազատության, արդարության և այլնի մասին սեփական պատկերացումներով, ինչն իր հերթին պայմանավորված է նախորդ կենսափորձով, անձնական հետաքրքրություններով, դաստիարակությամբ, սոցիալ-տնտեսական և այլազան գործոններով: Այս գործոնների ազդեցությանը շրջակա աշխարհը բացվում է նարդու առջև ամենատարբեր նշանակություններով՝ անենանպաստավորից մինչև նրա լյանքին սպառնացողը:

Շրջակա աշխարհը նարդու գիտակցության մեջ արտացոլվում է մշակութային «հայելու» միջով: Այլ կերպ ասած՝ աշխարհի ընկալումը ոչ թե պասիվ հայեցողություն է, այլ մարդու բարոյական հայացքների, մշակութային ավանդույթների, նախապաշտումների ու կարծրատիպերի «օտիչուվ» անցած և անձնավորված ընթանում, ինչը հնարավորություն է տալիս «մարդկայնացնելու» իրականությունը՝ այն դարձնելով առավել հասկանալի ու բացատրելի: Իսկ դա նշանակում է, որ մեր արարքների առնվազն առերևույթ պատճառները երբեմն պայմանավորված են այն բանով, թե ինչպիսին է աշխարհը մեզ թվում անկախ նրա իրական գոյից: Պատահական չե, որ մարդկի հաճախ դառնում են իրենց ընկալումների գերին:

Եթե բոլոր մարդկանց մեջ զգայությունների ծևավորման գործընթացը միանման է, ապա ստացված զգայությունների մեկնաբանությունն ու նույնականացումը որոշվում են մշակույթով, ստացված տեղեկույթի գնահատման ու մեկնաբանման մշակութաբանական չափորոշիչներով: Այս առնչությամբ տեղին է նկատել, որ մարդու կողմից իրականության ընկալման ու յուրացման մշակութային կարևոր դեսերմինանտներից մեկը լեզուն է: Ի դեպ՝ մշակութային տարբերությունների ու հակադրությունների պարագայում միջնշակութային հաղորդակցման հաջողությունը կախված է մի շարք գործոններից: Այստեղ կանխորչիչ գործոններից մեկը, որը սահմանում ու որոշում է ինչպես հաղորդակցության շարժառիթները, այնպես էլ հաղորդակցային գործունեության բուն բովանդակությունը, այն է, որ հաղորդակցվողները պատկանում են տարբեր լեզվամշակույթների: Այս գործոնը մեծ ազդեցություն ունի ինչպես տարբեր մշակույթների ներկայացուցիչների միջանձնային շփման, այնպես էլ միջնշակութային հաղորդակցման սոցիալական համատեքստի վրա: Ընդ որում, չի կարելի ասել, թե այս գործոնը ազդում է միայն «մահիվ հաղորդակցվողների» վրա, իսկ միջնշակութային հաղորդակցության ոլորտում կրթվածությունն ու զարգացածության աստիճանը կարող է հանգեցնել միջնշակութային ու միջլեզվական սահմանները ջնջելուն կամ հաղթահարելուն: Միջնշակութային հաղորդակցման ոլորտում մեծ փորձը ընդամենը նպաստում է իրազեկմանը՝ օտարի «այլության» գիտակցմանը, նույնիսկ նրա «գոյության իրավունքի» ճանաչմանը, բայց ոչ երբեք լեզվամշակութային բազմազանության անհետացմանը: Բանն այն է, որ յուրաքանչյուր լեզու ոչ միայն հաղորդակցային նշանների համակարգ է, այլև բովանդակում է ազգի կամ էթնոսի ողջ մշակույթը: Այլ կերպ ասած՝ լեզվամշակույթում արտացոլվում է տվյալ ազգի ինքնությունն ու ինքնագիտակցությունը: Նեղ իմաստով՝ էթնիկ ինքնագիտակցությունը մարդու նույնացումն է այս կամ այն էթնոսին, այսինքն՝ այն էթնիկական ինքնությունն է: Լայն իմաստով այն ոչ միայն ինքնանույնացում է նշանակում, այլև էթնիկական մշակույթի ողջ համալիրի, ողջ

մշակութային միջավայրի իմաստավորում, այսինքն՝ մշակութային ինքնության գիտակցում:

Եթեկ և մշակութային ինքնությունները պատկանում են անձի հիմնարար բնութագրերի շարքին, քանի որ ինքնանույնականացման և ինքնագիտակցման գործողությունների շնորհիվ անձը կարողանում է իր «Ես»-ը համեմատել այլոց հետ և օտար հասարակության մշակութային ու սոցիալական ծների ճանաչման, համեմատման ու գնահատման գործողությունների շնորհիվ ձեռք բերել ինքնագիտակցություն¹: Օտարի և յուրայինի տարբերակման և սեփական աշխարհընկալման ձևավորման հիմքում ընկած է եթեկենտրոնությունը: Այն մարդուն ինարավորություն է տալիս օտարի սոցիոմշակութային առանձնահատկությունների ճանաչման միջոցով ուրվագծել իր եթեկնմշակութային սահմանները: Ընդ որում, այդ ճանաչումը միշտ իրականացվում է սեփական սոցիոմշակութային համակարգի համատեքստում: Այդ իսկ պատճառով «օտարի «աշխարհի պատկերը» փոփոխվում է արտակարգ դանդաղ, նույնիսկ որակական շարժերը, որոնք տեղի են ունենում օտար մշակույթներում (ինչպես խորհրդային կարգերի տապալումը խորհրդային Միության երկրներում), նույնիսկ դրական բնույթի փոփոխություններն արագորեն չեն ամրագրվում «յուրայինների» ընկալումներում, հատկապես եթե օտարների վերաբերյալ ձևավորված գնահատականներն արդեն իսկ ժխտական են, և հակառակը, բացասական պահերը հեշտորեն նտնում են առօրեականություն»²:

Միևնույն ժամանակ, եթեկենտրոնությունը, որպես սեփական մշակութային գտիշների օգնությանք աշխարհի գնահատման ու իմաստավորման միտում, ինքնին ոչ վատ է, ոչ լավ. այն «սոցիալիզացիայի և մշակութին հաղորդակից լինելու բնականոն հետևանք է»³: Եվ այս առումով «միջնմշակութային հաղորդակցման արդյունավետությունը կախված է աշխարհի իմաստավորման ու գնահատման եթեկենտրոն մշակույթի ձկունությունից»⁴: Ի դեպ, միջնմշակութային հաղորդակցության սկզբունքներին ու գիտելիքներին անծանոթ հաղորդակցվողի ելակետային դիրքորոշումներն առավել քիչ ծկուն են, ինչի հետևանքով օտար մշակույթի նկատմանք թշնամական վերաբերմունքը հաճախ տարածվում է նաև միջնմշակութային հաղորդակցման լեզվի վրա: Որևէ ժողովրդի նկատմանք թշնամական վերաբերմունքը, օրինակ, կարող է դառնալ այդ ժողովրդի լեզվի յուրացումը խոչընդոտող հանգամանք:

«Ուրիշին հասկանալը» հեշտ չէ, առավել ևս, եթե միմյանց միջև գոյություն ունեն լեզվական և, դրանով իսկ, նշանաբանական տարբերություններ: Մարդ հասկանում է միայն այն, ինչն արդեն որոշակիորեն ճանաչել է: Նորի ճանաչումը շատ հաճախ զուգորդվում է վախով, քանի որ այդ նո-

¹ **Տես Տիխոնովա Н. А.** Стереотипы в отношении гастрономии как маркеры культурной идентичности // "Исторические, философские, политические и юридические науки . Вопросы теории и практики". Тамбов, 2011, № 6(12). В 3-х ч., ч. 3, էջ 183:

² **Кашкин В. Б.** Маркеры своего и чужого в межкультурном диалоге // "Взаимопонимание в диалоге культур: условия успешности". Коллективная монография. Ч. 2. Воронеж, 2004, с. 61.

³ **Мацумото Д.** Психология и культура. СПб., 2002, с. 74–75.

⁴ Նույն տեղում, էջ 77:

որ դեռևս անորոշ է և կարող է ընկալվել որպես սեփական գոյության սպառնալիք: Որոշ իմաստով կարելի է ասել, որ լեզուն և այլ հաղորդակցային համակարգերը առաջացել են շրջակա չճանաչված, չանդամահատված աշխարհի նկատմամբ վախից: ճանաչված, անդամահատված և նշանակված աշխարհն առօրյա դիսկուրսում վերարտադրվում է որպես յուրային, անվտանգ, հարմարավետ, ոչ ագրեսիվ: Սեփական և օտար նշակույթների ճանաչված կարծրատիպերը նպաստում են հարմարավետության և անվտանգության գագողության ստեղծմանը: Այդ գացողությունը, որն անհատը ստեղծում և ձգուում է պահպանել, ինքնապահպաննան այն բնազդներից մեկն է, որը նպաստում է մարդու ինքնության պահպաննանը: Ավելին, այդ այսպես կոչված հարմարավետ պրակտիկան կիրառվում է անգամ մանիպույացիոն գործընթացներում, քանի որ այն հենվում է ավանդույթների, նախապաշտումների, առասպելների վրա, որոնք հենց հարմարավետ պրակտիկայի դրսերումներ են⁵:

Ցանկացած դիսկուրս ուղղված չէ տեղեկատվության փոխանցմանը. դիսկուրսիվ գործումներության հիմնական գործառույթը հաղորդակցային և կենսական տարածությունների սահմանազատումն է: Դաղորդակցային վարքն ուղղորդված է յուրային (սեփական) լսարանի հետ նույնականացմանը և օտարից սահմանազատմանն ու հեռավորության պահպաննանը: Միջնշակութային դիսկուրսը կապված է զանգվածների ու անհատների խմբերի միավորման և այլ խմբերից սահմանազատման հետ՝ հիմնվելով սոցիալական ռեալության մեկնաբանության վրա: Նույնականացումն ու սահմանազատումը փոխլրացնող գործընթացներ են և նշանաբանական սահմանի երկու կողմերն են:

Այս կամ այն մշակույթը կամ մշակույթի նշանային համակարգը գնահատող պարզունակ ընթացումներում, որպես կանոն, խախտվում է համընկնողության սկզբունքը, այսինքն՝ համակարգին համապատասխանությունը, դրա հետ համատեղելիությունը: Բանն այն է, որ այդ գնահատականներում այլ մշակութային կողին, լեզվին, նշանաբանական համակարգին պատկանող նշանները մեկնաբանվում են սեփական մշակույթի, սեփական լեզվի, սեփական համակարգի միջոցով⁶: Այս ժանապարհով օտար մշակույթի տարբեր տարրերի տրվում են տարբեր պիտակներ: Սակայն յուրաքանչյուր նշանաբանական համակարգ պայմանականությունների համակարգ է. «Յուրաքանչյուր ազգ բնության մասին ունի իր պատկերացումը: Միջնշակութային դիսկուրսը, հատկապես որոշակիության ձգուելու, գոյություն ապահովելու, սեփական մշակութային տարածությունը օտարից պաշտպանելու դեպքերում, պայմանական-մշակութայինն ընդունում է որպես բնական անհրաժեշտություն»⁷:

Մարդկային կենսագործումներության հիմքում ընկած են մի շարք արժեքաբանական տարրերակիչ գնահատականներ (վտանգավոր և անվտանգ, օգտակար և վնասակար, յուրային և օտար և այլն), որոնք միջ-

⁵ Стёу Филинский А. А. Критический анализ политического дискурса предвыборных компаний. Тверь, 2002, № 59:

⁶ Стёу Кашкин В. Б. Введение в теорию коммуникации. Воронеж, 2003, № 89-90:

⁷ Барт Р. Общество, воображение, реклама // "Система моды: статьи по семиотике культуры". М., 2003, с. 426.

մշակութային հաղորդակցության պարագայում դրսնորվում են վերաբեր-
մունք արտահայտող կարծրատիպերի ու կանխադիրքորոշումների տես-
քով՝ եական ազդեցություն թողնելով հաղորդակցության սկզբի, իրակա-
նացման և արդյունքի վրա⁸: Բանն այն է, որ նարդու հիմնական հատկու-
թյուններից մեկը շրջակա աշխարհի առարկաների ու երևույթների տարբե-
րակումը, դասակարգումն ու սահմանազատումն է: Այս առնչությամբ Յու.
Լումանը նկատում է, որ «...անհատականության ինքնանույնականացման
և արժեհանակարգի ձևավորման հիմնական մեխանիզմներից մեկը սահ-
մանազատումն է, սեփական և օտար տարածությունների միջև սահմանի
անցկացումը...: Սեփական տարածությունը սահմանվում է որպես «մեր»,
«յուրային», «մշակութային», «անվտանգ», «ներդաշնակ կազմակերպ-
ված» և այլն: Դրան հակառակում է այն տարածությունը, որը բնորոշվում է
որպես «նրանց տարածություն», «օտար», «թշնամի», «քառսային»»⁹:

Սահմանի գաղափարը մեծապես ու գլխավորապես գուգորդվում է «փշալարային», մեղմ ասած «պատից այն կողմ», «ուրիշ», «սխալ», «ար-
գելված» և այլ կարծրատիպերի հետ: Ի դեպ, «յուրայինների» և «օտարնե-
րի» ֆիզիկական կամ քաղաքական սահմանները միշտ չեն, որ համապա-
տասխանում են նրանց միջև եղած տնտեսական, էթնոմշակութային ու
պատմամշակութային սահմաններին ու դրանց առասպելաբանությանը:
Օրինակ՝ տարածքային ու գաղափարական ինաստով «Արարատ լեռը» ոչ
միայն հայկական իրականություն է, այլև խորհրդանշանային իմաստ ունե-
ցող մի իրականություն, որը կա բոլոր նրանց հաճար, ովքեր հավատում
են ջրհեղեղի աստվածաշնչյան մեկնաբանությանը: Այսինքն՝ Արարատը մի
յուրահատուկ լեզվամշակութային սահման է, որը տարանջատում է յուրա-
յինը օտարից: Ընդ որում, յուրայինի և օտարի տարանջատում և հակադ-
րություն կարող է առաջանալ ոչ միայն օբյեկտիվ, այլև գիտակցության
մեջ նրանց սուբյեկտիվ արտացոլման պատճառներով¹⁰: Եվ այնուամենայ-
նիվ, թեև սահմանազատման պատմեցները անցողիկ են, միևնույնն է,
դրանք երկար ժամանակ պահպանում են իրենց վարքաբանական նշանա-
կությունը, դրանք են ստեղծում այն աշխարհը, որտեղ ապրում է նարդկա-
յին անհատը և էրնիկ խումբը: Այդպիսի օրինակ կարող է ծառայել միջգեր-
մանական սահմանը: «Բեռլինյան պատի» ֆիզիկական ռեալությունը
կարծ կյանք ունեցավ: Պետք է նկատել, սակայն, որ երկու Գերմանիաների
միջև ֆիզիկական սահմանի ոչնչացումից հետո ևս դեռ պահպանվում է
նրանց միջև վարքաբանական սահմանը՝ փոխվել է միայն սահմանի արժե-
քաբանական իմաստը: Եթե մինչ այդ ԳԴՀ-ը դիտվում էր չար ուժերի պատ-
վար, ապա այժմ նախկին այդ տարածքը, իր բնակիչներով հանդերձ,
ստացել է «մութ Գերմանիա» (Dunkeldeutschland) որակումը և այլն¹¹: Այս-

⁸ Տե՛ս Կարասիկ Վ. Ի. Языковой круг; личность, концепты, дискурс. Волгоград, 2002, էջ 29:

⁹ Լոտման ՅՈ. Մ. Внутри мыслящих миров. Человек–текст–семиосфера–история. М., 1996, с. 175.

¹⁰ Տե՛ս Степанов ՅՈ. Ս. Константы: словарь русской культуры. М., 2001, էջ 127:

¹¹ Տե՛ս Bashaikin N., Das Eigene und das Frame: Das Deutsche zehn Jahre ohne Mauer // "Свое и чужое в европейской культурной традиции: литература, язык, музыка". Н. Новгород, 2000, էջ 23-24:

պիսի օրինակներ շատ կան, որոնք նույնպես հաստատում են, որ բնության մեջ սահմաններ չկան. սահմաններն անցկացնում է մարդը, դրանք նշանային, մշակութային, գաղափարական բնույթ ունեն և իրենց հատուկ կարծրատիպային վարքով մարդկանց գոյության համար խիստ էական են: Ինչպես գոյություն ունի ներքին գրաքննություն, այնպես էլ գոյություն ունեն ներքին սահմաններ, որոնք միջնշակութային փոխհարաբերություններում կողմերի փոխհասկացման ու փոխընթանման արգելքներ են:

Միջնշակութային հաղորդակցության համար լեզվական, նշանաբանական սահմանի գործոնը հիմնարար, արմատական նշանակություն ունի: Հաղորդակցման սկիզբը ենթադրում է, որ հաղորդակցվողները իրենց և գրուցակցին ընկալում են որպես «յուրային» և «օտար»: Երկխոսության մեջ յուրայինի և օտարի խորքին տրվում են տարբեր իմաստներ ու նշանակություններ, այսինքն՝ մարկերներ, որպես սեփական լեզվի ու մշակութի «սահմանից այն կողմ», «պատից այն կողմ» գտնվող լեզվամշակութի ներկայացուցչի խոսք: Ընդ որում, կարևոր չէ, թե ինչ միջոցով է տարվում երկխոսությունը՝ երկու լեզուներից մեկո՞վ, բոլորովին այլ լեզվո՞վ, թե՞ թարգմանչի օգնությամբ: Բոլոր դեպքերում հաղորդակցվողները հաշվի են առնում և ընդգծում են իրենց տարբեր մշակույթների պատկանելությունը: Այսպիսի տարանջատումն անպայմանորեն չի նշանակում հականարտություն կամ ազրեսիվ հաղորդակցություն: Չատ հաճախ հաղորդակցվողները փնտրում են փոխադարձ հասկացման ընդհանուր դաշտ՝ արդյունավետ հաղորդակցմանը նպաստելու համար նոտեցնելով լեզվամշակութով դետերմինավորված աշխարհըմբռնումները: Հաղորդակցային հավասարակշռությունն ապահովում է համակրանքի և հակակրանքի, փոխազդեցության և ազդեցության երկու մրցակցող սկզբունքներով: Անկախ այն բանից, թե այդ սկզբունքներից որին է նախապատվություն տրվում, **նշանաբանական սահմանի առկայության ճանաչումն ու ընդունումը միջնշակութային հաղորդակցման համար հաստատում են:**

Միջնշակութային հաղորդակցությունում նշանաբանական սամանը մարկերավորվում է, ընդ որում՝ այդ հաղորդակցությունում միջնշակութային հարաբերությունների մասին յուրայինի և օտարի մարկերները բաժանվում են երեք մակարդակների.

- համահաղորդակցային դիրքորոշումների մակարդակ, որտեղ մարկերները վերաբերում են լեզվին (սեփական և օտար լեզու, մշակույթ),
- կոնցեպտների մակարդակ՝ լեզվի միավորների մարկերներ («յուրայինի» և «օտարի» բառ, անուն, բառի հասկացում, միֆոլոգեմ, էթնոնիմ և այլն),
- հաղորդակցային վարքի մակարդակ՝ վարժարանական մարկերներ (յուրայինների և օտարների վարքի մոդել, խոսք):

Զամահաղորդակցային դիրքորոշումների մակարդակում առօրյա գիտակցության մեջ օտար լեզուն ավելի շատ բացասական, քան դրական նշանակություն ունի, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ «օտար լեզու» ասելով մենք նկատի ունենք ոչ թե որևէ կոնկրետ լեզու, այլ օտարների կամ օտար տեքստերի հետ ապագա շիմանը վերաբերող պատկերացումները, վախերը ու ֆոբիաները: «Օտար լեզվի էֆեկտը»

պայմանավորված է մարդկանց մտածական ունակությունների ժամանակավոր անկմամբ, երբ նրանք օգտագործում են օտար լեզուն¹²: Սեփական ուժերի թերագնահատումը առաջ է բերում միանգամայն բնական պաշտպանական ռեակցիա կարծրատիպերի, պատկերացումների, սնահավատությունների, համալիր դիսկուրսիվ գործողությունների և այլ ձևերով:

Սովորաբար օտար լեզուն ընկալվում է որպես անսովոր, տարօրինակ, զարմանալի, իսկ յուրային, սեփական լեզուն՝ պարզ, թափանցիկ, հասկանալի¹³: Այսպիսի պատկերացումն այս կամ այն չափով հատուկ է բոլոր հաղորդակցվողներին, անկախ այն բանից, թե որքանով են նրանք տիրապետում միջնշակութային հաղորդակցության գիտական հիմունքների ոլորտին: Սոցիալական մակարդակում օտար լեզվի ընդհանրական գնահատականը դրսենորվում է զանգվածային մշակույթում, գրականությունում, կրթությունում, քաղաքական-տնտեսական նախընտրություններում և այլն: Այդ գնահատականն առաջ է գալիս բազմաթիվ սուբյեկտիվ գնահատականներից ու նախընտրություններից և իր հերթին ազդում է վերջիններիս վրա: Օրինակ՝ կրթության և ինքնակրթության ոլորտում օտար լեզվի (առաջին, երկրորդ և այդպես շարունակ) ընտրությունը մեծապես կախված է ոչ միայն աշխարհում տիրող տնտեսական ու մշակութային իրադրությունից, այլ նաև ձևավորված կարծրատիպերից ու առասպելներից: Օրինակ՝ Հայաստանում առանձնակի կարևորվում է ռուսերենը որպես երկրորդ լեզու, որի պատճառն ավելի շատ կարծրատիպային բովանդակություն ունի, քան տնտեսական կամ քաղաքական: Սա կապված է այսպես ասած կենցաղային արժեքաբանության հետ, որը դրսենորվում է այլալեզու և այլ մշակութային միջավայրերում սեփական հաղորդակցային կարծրատիպերի ձևերով ու զանգվածային գիտակցությունում այս կամ այն լեզվի կամ էթնոսի մասին առասպելների համակարգի և կարծրատիպերի, այլ կերպ ասած՝ լեզվական կամ էթնիկական «հմիջի» տեսքով: Այլ լեզուների կամ էթնոսների մասին առասպելները, որոնք կարելի է սահմանել որպես նշանաբանական սահմանի առասպելաբանություն, հարաբերակցության մեջ են գտնվում տվյալ սոցիոլոգում հանդուրժողական գիտակցության դրսերման մակարդակի և առանձին լեզվի օգտագործողի ու մշակույթի կրողի վարքաբանական կարծրատիպերի հետ: Օրինակ, հայտնի է, որ հայալեզու մշակույթը կրողների համար ֆրանսերենը գեղեցիկ է, իսկ գերմաներենը՝ կոպիտ, ֆրանսերենը պիտանի է սեր բացատրելու, հաճոյախոսություններ անելու, գեղեցիկ խոսելու, պոեզիայի համար, գերմաներենը՝ կարգ ու կանոնի, բուրքերենը՝ բարբարոսության և այլն:

Բնականաբար, ազգային-լեզվամշակութային համակարգում գնահատվում են այն լեզուները, որոնք այս կամ այն կերպ նշանակություն ունեն տվյալ մշակություն: Դրանք կամ տարածքով մոտ երկրների ու ժողովուրդների, կամ մշակութապես կապված ժողովուրդների, կամ միջազգային դրոմինանտ լեզուներն են:

Միջնակութային հաղորդակցման գործընթացում յուրայինի և օտարի նշանաբանական մարկերավորման երկրորդ մակարդակում (կոնցեպտ-

¹² Տե՛ս Մացումոտո Ջ., նշվ. աշխ., էջ 273-274:

¹³ Տե՛ս Ստեփանով ՅՈ. Ը., նշվ. աշխ., էջ 140:

ների) հանդես են գալիս լեզվի միավորները: Աշխարհի ընդհանրական պատկերի համատեքստում էրնոնիմները թույլ են տալիս հայտնաբերելու արտաքանակոր միջավայրի հետ բարի շփման այն տեսանկյունները, որոնք մնում են թաքնված, երբ լեզուն դիտվում է որպես բառերի հարաբերությունների համակարգ: Մարդը երբեք չի օգտագործում բառը հանուն բառի, նա ապրում և գործում է օգտագործելով բառերն իր և համատեղ հասարակական կյանքի կազմակերպման համար: Ցանկացած արտահայտության կենտրոնն ընկած է դրա սահմաններից դուրս՝ սոցիալական միջավայրում: Բարձ անբաժանելի հիմքն կապված է սոցիալական գործունեության հետ, այդ իսկ պատճառով միջմշակութային հակադրության պայմաններում էրնոնիմի՝ որպես վերբալ միֆոլոգեմի գործառության դիսկուրսիվային վերլուծությունը բացահայտում է լեզվամշակութային իմաստները:

Այդպիսի օրինակներ շատ կան. «հայի բախտ», «տիպիկ վրացի», «թուրքը մնում է թուրք», «անգլիական հումոր» և այլն, որոնցում հայ, վրացի, անգլիացի, թուրք բառերի ետևում կանգնած է ավելին, քան մարդկանց որոշակի խումբ: Էրնոնիմի գործածումը լեզվից օգտվողի գիտակցությունում առաջ է բերում մեկ միասնական ձևում փաթեթավորված՝ նախորդ գործածության համատեքստերի մասին հիշողություններ, համապատասխան էրնիկ խնդիր մասին գնահատականներ, նրանց հանդեպ զգացական հարաբերություններ և այլն: Այսինքն՝ միջմշակութային դիսկուրսներում էրնոնիմն իր թիկունքում բաքցնում է առասպելը՝ որպես գործողության դեկապարման միջոց:

Միջմշակութային հակադրության պայմաններում դիսկուրսն ունի ինտերտեքստուալ բնույթ, այսինքն՝ ցանկացած տեքստ, խոսք, արտահայտություն բովանդակում են ենթատեքստ, կանխատրամադրվածություն, յուրայինի և օտարի մասին հիշողություններ ու պատկերացումներ, որոնք պայմանավորում են ողջ դիսկուրսը¹⁴:

Բառույթ-էրնոնիմը, որի թիկունքում առասպելն է, բնութագրում է ոչ թե ինտերտեքստի երեք կողմերը, այլ հաղորդակցման հնարավոր մասնակիցներից մեկին: Բացի դրանից, էրնոնիմֆոլոգեմը, մինչ հաղորդակցության մեջ մտնելը, հնարավոր գրուցակցին կամ հաղորդակցվողին վերագրում է իր արժեհամակարգով պայմանավորված նշաններ, և այդպիսի կանխատրամադրվածություններն անընդհատ «ուղեկցում» են միջմշակութային գործողությանը կամ իրադարձությանը, ընդ որում՝ միջմշակութային հաղորդակցության պատմության ողջ ընթացքում, ինչը, օրինակ, նկատելի է հայ-թուրքական հարաբերություններում: Դաղորդակցման ընթացքին բնորոշ է դերերի փոխադարձ սահմանումը, որտեղ հաղորդակցվողները դեկապարվում են էրնոնիմներով և առասպելներով ու դրանցից առաջացած կարծրատիպերով: Այստեղ առանձնահատուկ նշանակություն ունի աշխարհի կարծրատիպացման՝ մարդու, էրնոսի կամ սոցիալական խմբի ունակությունը կամ «բնազդը»: Կարծրատիպը սոցիալական խմբի յուրաքանչյուր ներկայացնուցի վերաբերյալ ստեղծում է նույնական տպավորություններ, որոնք ըստ երևույթին անհրաժեշտ են տվյալ սոցիալական խմբի հետ մեր հարաբերությունների, նրա հետ վարվեցողության միջոցնե-

¹⁴ Տես Իլյին Ի. Պոստմոդեռնիզմ. Մ., 2001, էջ 101-103:

ոի որոշարկման, առանձին անհատներից բաղկացած սոցիալական միջավայրին մեր հարմարվողականության համար: Եթոնմշակութային և լեզվամշակութային խմբի կարծրատիպերը կարող են և շնչել, մաքրել անհատների միջև սահմանները, և հստակեցնել, անրացնել ու պահպանել դրանք: Ընդհանուր առնամբ՝ նարդու վարդի կարծրատիպացումը նպաստում է ջանքերի տնտեսմանը, իշեցնում է գոյության անորոշությունը և մարդկային էակին ի վերջո հնարավորություն է տալիս հարմարվելու շրջակա սոցիալական միջավայրին¹⁵: Կարծրատիպը, որպես կանոն, արժեքարանորեն կամ զգացնություն մարկերավորված է: Օտար էթնոսները այդ կարծրատիպերուն հաճախ բնութագրվում են որպես ցածրակարգ խմբավորումներ: Այս տեսանկյունից աշխարհի էթնոկենտրոն ընկալման միտումը մարմնավորվում է զգային կամ էթնիկական կարծրատիպերում՝ էթնոկարծրատիպացման մեջ: Կարծրատիպացման գործընթացներն առկա են ոչ միայն այս կամ այն երկրի կամ ազգի ներկայացուցչի կերպարի ընկալման մեխանիզմներում, այլև ներառում են նաև առարկաների և իրադարձությունների մասին արտահայտություններն ու մտածողությունը: Կարծրատիպերը առարկայի մասին նաև այնպիսի ազգային, էթնիկական պատկերացումներ են, որոնք վերաբերում են այդ առարկայի լինելությանը (ինչպիսի տեսք ունի, ինչպես է գործում և այլն)¹⁶: Այլ կերպ ասած՝ էթնոկարծրատիպը դրսևորվում է որպես ուրիշների (ուրիշ մշակույթի) մասին այնպիսի մեկնաբանություն, որն անցնում է տվյալ մշակույթի միջով և պայմանավորված է տվյալ լեզվամշակութային մարկերներով: Կարելի է առանձնացնել էթնոմշակութային կարծրատիպացման մի շարք տարատեսակներ:

- պարզ ավտոկարծրատիպեր ու հետերոկարծրատիպեր (ինչ ենք մենք մտածում մեր և օտարների մասին),
- փոխարերական ավտոկարծրատիպեր ու հետերոկարծրատիպեր (ինչ ենք ենթադրում այն մասին, թե ինչ են օտարները մտածում մեր և իրենց մասին)¹⁷:

Հարաբերությունների և հաղորդակցային վարդի կարծրատիպացման բոլոր տարատեսակներում դիտվում է մեկ սկզբունք: Բինարային ընդդիմության սկզբունքով, նույնիսկ ուրիշ ժողովողի, ազգի սահմաննան ու գնահատման ժամանակ, գնահատողն օգտագործում է իր և յուրայիններին հատուկ բնութագրիչներ, սահմանափակվում է իրենց վարքարանական համակարգով: Եթե օտարներին վերագրվում է անբանություն կամ ծուլություն, ապա ենթադրվում է, որ յուրայիններն աշխատասեր են, կամ հակառակը:

Այսպիսով, էթնոսը, իր ներկայացուցիչների դիսկուրսի միջոցով իրեն նույնականացնելով, սահմանագծում է սեփական էթնոմշակութային տարրածությունը, որտեղ առանձնահատուկ նշանակություն են ստանում «յուրայիններ» և «օտարներ» կոնցեպտները:

¹⁵ Steu Lippman W., Public Opinion, New York, Harcourt, Brace, 1992, 81, 95 էջ:

¹⁶ Steu Бартминьский Е. Базовые стереотипы и их профилирование // "Стереотипы в языке, коммуникации и культуре". Сборник статей. М., 2009, էջ12:

¹⁷ Steu Кашкин В. Б., նշվ. աշխ., էջ 57:

Յուրայինի և օտարի նշանաբանական մարկերավորման երրորդ մակարդակում (**դիսկուրսիվ մակարդակ**) կարևոր դեր են խաղում անունները: Մարդն իր կյանքի ընթացքում անցնում է ինքնանունականացման երկու հիմնական մակարդակ. առաջին, երբ սոցիալական միջավայրից իրեն սահմանազատում է որպես անհատ, երկրորդ, երբ այլ սոցիալական խնդերից իրեն սահմանազատում է որպես տեսակ կամ ենթատեսակ (ազգ, ժողովուրդ, սոցիում, հանրույթ): Մարդու անունը և ժողովորդի անունը (անտրոպոնիմ և էրնոնիմ) առասպելականացված համակարգի երկու կենտրոններ են, որոնք կազմակերպում են անհատի կյանքն ու գոյությունը, որոշակիորեն պայմանավորում նրա վարքը: «Սա ես եմ» և «սա մենք ենք» հաստատումները սոցիալական դիսկուրսի առաջնային տարրերն են, որոնք որոշարկում են մարդու ներքին և արտաքին սահմանները ողջ սոցիալական միջավայրում: Էթնոնիմի գործառական նշանակությունը միջմշակութային փոխհարաբերությունների համակարգում հիշեցնում է այլ դիսկուրսիվ համակարգերի փոխհարաբերություններ տարրեր ոլորտներում, ինչպես, օրինակ, քաղաքական կամ տարիքային: Քաղաքական կուսակցություններն ու խմբավորումները, բանդաներն ու պատանեկան խմբավորումները, ֆուտբոլային թիմի երկրպագուները, այս կամ այն աստղի ֆանատները դիսկուրսիվ, իսկ ավելի լայն՝ հաղորդակցային վարքում դրսևորում են հստակ համընդհանություն: Նրանք միավորվում են նմանության հատկանիշով և ստիպում են խնդիր մյուս անդամներին իրենց պահել հաղորդակցային իրենց կանոններով ու վարքով: Այստեղ սահմանի մարկերներ են ավտոնոմինատ-միֆոլոգեմներն ու հետերոնոմինատ-միֆոլոգեմները:

Անհատի սոցիալիզացման գործընթացում օտար սոցիումի մարկերը դաշնում է սեփական՝ որպես հաղորդակցային անձի սահմանի մարկեր: Դիսկուրսիվ վարքում օտարի մարկերն առաջին հերթին դրսևորվում է այլ մշակույթի ներկայացուցչի հաղորդակցային վարքի խոսքային գնահատականով: Այդ գնահատականը կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական: Այստեղ անփոփոխ է մնում միայն օտարի այլության, ուրիշության փաստի ճանաչումը:

Այսպիսով, երբ խոսքը միջմշակութային հաղորդակցման համատեքստում լեզվանշակույթների համեմատության մասին է, ապա պետք է նշել, որ լեզվական համակարգի ոչ միայն առանձին միավորները, այլև ողջ համակարգն ունի ազգային-մշակութային մարկերավորում:

Բանալի բառեր –յուրային, օտար, միջմշակութային հաղորդակցություն, լեզվամշակույթ, էթնոկենտրոնություն, էթնոկարժրատիպ, էթնիկական և մշակութային ինքնություն, լեզվական մարկերներ

КАЗАР АВЕТИСЯН – Семиотические особенности отношений "своего" и "чужого" в контексте межкультурной коммуникации. – В процессе диалога и межкультурной коммуникации большое значение приобретают некоторые особенности языка и языковой культуры, в частности такие, как стереотипизация и языковая маркировка. В результате отдельные языковые элементы приобретают дополнительные смыслы и значения, между "своим" и "чужим" проводятся се-

мииотические границы. Проводящие границу маркеры делятся на три уровня: касающиеся языка в целом, касающиеся отдельных языковых элементов и касающиеся поведения.

Ключевые слова: *свой, чужой, межкультурная коммуникация, языковая культура, этноцентризм, этностереотип, этническая и культурная идентичность, языковые маркеры*

GHAZAR AVETISYAN – Semiotic Peculiarities of the Relations between “Insider” and “Stranger” in the Context of Intercultural Communication. – Certain peculiarities of language and language culture have particular significance in intercultural communication and dialogue. Specific examples are stereotyping and marking, because of which, particular linguistic units acquire additional meanings and significance as well as semiotic limits between insiders and strangers are drawn. Markers that draw limits can have three types: markers that regard the whole language, markers that regard linguistic units and markers that regard behavior.

Key words: *insider, stranger, intercultural communication, lingual culture, ethnocentrism, ethnic stereotype, ethnic and cultural identity, language marker*